ՍՈՒՍԱՆՆԱ ՂԱՐԻԲՅԱՆ

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆԻՑ ԱՊԱՍԱՐԿՈՒ ԲԱՌԵՐԻ

Լեզուն բարդ համակարգ է: Դարերի ընթացքում լեզուն մշտապես զարգանում ու փոփոխվում է: Լեզվի պատմական զարգացման ընթացքում փոխվում են բառերի ձևերը, իմաստները, ինչպես նաև նրանց գործառույթները:

Բառերի իմաստային փոփոխությունները հիմնականում տեղի են ունենում բառագործածութ-յան գործընթացում բառի փոխաբերական, փոխանվանական և համընդհանրական գործածության հետևանքով[1]:

Երբ բառերի իմաստային փոփոխությունները կատարվում են խոսքիմասային մակարդակով, այդ դեպքում կատարվում է խոսքիմասային փոխանցում:

Բառերի խոսքիմասային անցումները տեղի են ունենում մեծ մասամբ նրանց շարահյու-սական կիրառության հիման վրա: Բառը, գործածվելով մի այլ խոսքի մասի կիրառությամբ, աստիճանաբար ձեռք է բերում մի նոր ընդհանուր իմաստ, և բառի խոսքիմասային իմաստը երկփեղկվում է: Հետագա զարգացումը կարող է հանգեցնել նրան, որ բառն այլևս չգործածվի իր հին խոսքիմասային իմաստով:

Մի խոսքի մասից մյուսին անցնելով բառը ձեռք է բերում տվյալ խոսքի մասին հատուկ իմաստային, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները[2]:

Բառերի իմաստային փոփոխությունները ուղեկցում են լեզվին նրա զարգացման ողջ ընթացքում: Լեզվի նյութական իմաստ ունեցող որոշ բառեր նյութական իմաստի մթագնման և առարկայական նշանակության վերացարկման ճանապարհով աստիճանաբար զրկվում են իրենց հիմնական բառային ու քերականական իմաստներից և վերածվում են սպասարկու բառերի կապերի, շաղկապների, ձայնարկությունների և եղանակավորող բառերի:

Մեր խնդրո առարկան է, մի կողմ թողնելով լեզվի պատմական տվյալները, անդրադառնալ ժամանակակից հայերենի բառերի բառային իմաստների փոփոխություններին նյութական իմաստի վերացարկումով գոյականական սերիչ կաղապարներից:

Քանի որ խոսքիմասային փոխանցումները տեղի են ունենում մեծ մասամբ խոսքի մեջ բառերի տարբեր շարահյուսական կիրառությունների հիման վրա,

---

[1] Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան 1984, էջ73:
[2] Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970, էջ92:

ուրեմն չկտրելով բառը իր իրական հողից բառիմաստային փոփոխությունները դիտարկենք կոնկրետ շարահյուսական կիրառության մեջ:

Ա. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻՑ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԿԱՊԻ

Կապը քերականական իմաստ արտահայտող խոսքի մաս է, որը ցույց է տալիս, թե ինչ հարաբերության մեջ են գտնվում գոյականները, գոյականաբար գործածված բառերը, առարկայական նշանակություն ունեցող դերանունները գերադաս բառի նկատմամբ: Ժամանակակից հայերենի կապերի մի զգալի մասը առաջացել է գոյականներից:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում որոշ գոյականներ զրկվել են իրենց բուն խոսքիմասային իմաստից, վերացարկվել է սրանց առարկայական նշանակությունը, և այդ բառերը վերածվել են կապերի:

Գոյականներից կապերի են փոխանցվում այն բառերը, որոնց մեջ այս կամ այն չափով առկա է հարաբերության իմաստը, որի շնորհիվ նրանք կարող են նախադասության մեջ գործածվել որպես կապ:

Չափ գոյականից, որն ունի «չափման միավոր, առարկայի քանակը որոշելու միավոր» իմաստները, բառիմաստի նեղացման հետևանքով առաջացել է չափ կապը:

Բարկացավ Դավիթ, չափը շըպրտեց: (ՀԹ,2,117),-գոյական:

Դուրս եկան ասեղի ծերի չափ մանր սև զարդեր: (ՀԹ, 3, 56),-կապ:

Ղեմ(ք) բառի արմատից նյութական իմաստի վերացարկումով առաջացել է ղեմ կապը: Լալով, ծածկած իր ղեմքը.

Թողեց Մարոն հոր շեմքը: (ՀԹ, 2, 6),-գոյական

Թռնիմ խոր երկինք...եվ սիրտս բանամ անհունության ղեմ: (ԱԻ, 1, 181),-կապ:

Ղեմք գոյականի սեռական հոլովից է առաջացել ղիմաց կապը:

Ու նա կատաղած հանդուգնն անեծքով

Ծառս եղավ դուշման երկնքի ղիմաց (ՀԹ, 2, 67) ,-կապ:

Ղեպ(ք) գոյականի արմատից նյութական իմաստի վերացարկման հետևանքով առաջացել է ղեպ(ի) կապը: Ահա պատմեմ ձեզ մի ղեպք: (ՀԹ, 2, 3),-գոյական:

Ես պիտի թռնեմ ղեպ սուրբ օրրանը

Իմ վեհ խոհերի, վառ ձգտումների: (ԱԻ, 1, 29),-կապ:

Մրրիկի նման զարկեցեք շեփոր

Ղեպի ռազմի դաշտ, ղեպ հերոսացում: (ԱԻ, 1, 306),-կապ:

Կողմ գոյականի բացառական հոլովածևից առաջացել է կողմից կապը:

Պսակ գնալիս մեծը Մոխրոտի աջ կողմն էր կանգնում, փոքրը ձախ կողմը : (ՀԹ, 3, 333),-գոյական:

Այդ մահն է իր նետերն ահեղ

Ամեն նոոմիզ լարել վերաս: (ԱԻ, 1, 225),-գոյական :

Խոնարհիր մինչև էն գետինը ցած

Ու էսպես ասա նրրան մեր նոոմիզ: (ՀԹ, 2, 231),-կապ:

Հետ(ք) գոյականից առաջացել է հետ կապը:

Բյուր ուղիներով ես դիմեցի քեզ,

Քո հետքն ու շուքը նույնիսկ չըգըտա: (ԱԻ, 1, 102),-գոյական:

Ապրում էր իր թագավորության մեջ իր թագուհու հետ ուրախ ու բախտավոր: (ՀԹ, 3, 356),-կապ:

Տեղ գոյականից նյութական իմաստի վերացարկումով առաջացել է տեղ կապը: Իր տեղն է հրսկան, չի շարժվում ասես: (ՀԹ, 2, 231),-գոյական:

Սիրած յարի համբուրի տեղ Սրրտին վարդեր են ծըլել: (ԱԻ, 1,136),-կապ:

Տակ գոյականից առաջացել է տակ կապը:

Աչքի տակը հարվածից տաքացել էր: (ԱԲ.),-գոյական:

Էսքան դարեր նա քարի տակ Դեռ շընչում է կենդանի: (ՀԹ, 1, 176),-կապ:

Ժամանակ գոյականից է առաջացել ժամանակ կապը:

Ժամանակ անցավ, նրանք էլ անցան

Զըվարթ երգերըս վըշտալի դարձան: (ՀԹ, 1, 15),-գոյական:

Հենց էդ խոսակցության ժամանակ ներս մտավ Գիքորը: (ՀԹ, 3, 44),-կապ:

Մեջ(ք) գոյականի արմատից առաջացել է մեջ կապը նյութական իմաստի վերացարկման հետևանքով:

Գալարում է մեջքը թեթև ծաղկանկար շալի մեջ: (ԱԻ, 1, 271),-գոյական:

Երազիս մեջ ծովը տեսա, ծովը լազուր ու անդորր: (ԱԻ, 1, 74),-կապը:

Միջոց գոյականից առաջացել է միջոցով կապ.

Գնալ-գալու համար նա երկու օր միջոց տվավ Ղազարին: (ԱԻ),-գոյական: Զորքի միջոցով պարսիկները փորձում էին ճնշել ապստամբության փորձերը: (Դ.Դ.),-կապ:

Պատճառ գոյականի գործիական հոլովածևից է առաջացել պատճառով կապը: Ծանրացավ աշխարհն ուսերիս վրա

Զուր ես հարցնում պատճառը վշտիս: (ԱԻ,1,207),-գոյական:

Երևի էդ շնորհքի ու էդ գլխի պատճառով ես տեսակ մի ավանդություն էլ կա: (ՀԹ,3,94),-կապ:

Անուն գոյականի գրաբարյան ի անուն>յանուն ձևից առաջացել է հանուն կապը: Պատվեր տվինք մեր բանակին, հանուն արդար ու սուրբ ոխի Մտնի հողը մեր ոսոխի: (ՀԹ,1,332),-կապ:

Առիթ գոյականի գրաբարյան գործիական հոլովածևից է առաջացել առթիվ կապը:

Այդ առթիվ դառնաճաճան Վիճակն էլ կա անփոփոխ: (ՀԹ,1,428),-կապ:

Շուրջ բառի «շուրջը, բոլորքը» գոյականական իմաստի նեղացման հետևանքով առաջացել է շուրջ մակբայը ժամանակակից հայերենում, հետագայում շուրջ կապը: Հողմ ու փոթորիկ շուրջքս են հածում

Ես ժայռի նման կանգնած եմ ամուր: (ԱԻ,1,37),-գոյական-մակբայ:

Խարույկի շուրջ. հովիվների, հոտի քով Սերս երգեմ քաղցր չվին ծոր տալով: (ԱԻ,1,37),-կապ:

Վեր գոյականից առաջացել է վեր մակբայը, սրանից էլ վեր կապը:

Ջուրը վերից գալիս է ջինջ: (ՀԹ,2,222),-գոյական-մակբայ:

Շատ եմ փոխվել այն օրից վեր.

Այնպես մի ցավ ունեմ ես: (ՀԹ,1,134),-կապ:

Վերև գոյակնից առաջացել է վերև մակբայը, որից էլ վերև կապը:

Նայեց աշխարհքին, նայեց վերևը

Եվ ուզեց իսկույն բոլորը գրկել: (ՀԹ,2,23)-գոյական-մակբայ:

Ժողովուրդն անհամբեր սպասում էր գյուղից վերև: (ՀԹ,3,30),-կապ:

Օգուտ գոյականի ի օգուտ>հօգուտ ձևից առաջացել է հօգուտ կապը:

Ահագին ծախք կլինի, բայց նա բոլորը նվիրում է հօգուտ հեղինակի: (Ր.),-կապ:

Համար գոյականից առաջացել է համար կապը:

Այն սրտատանջ ու մորմոքիչ երգը երգիր ինձ համար: (ՀԹ,1,52),-կապ:

Հանառակ գոյականից առաջացել է հակառակ ածականը, որից էլ հակառակ կապը: Շրջվել է հիմի դարը հակառակ: (ՀԹ.),-գոյական-ածական:

Չգիտեմ ինչու, կամքիս հակառակ. Նայեցի ահով նրա երեսին: (ԵՉ.),-կապ: Հանդերձ գոյականի «զգեստ, հագուստ» նյութական իմաստի վերացարկումով առաջա-ցել է հանդերձ կապը «հետ, միասին, հանդերձ» իմաստներով: Կամ թե նրա հանդերձին էն անհոգի չար ջադուն

Քրսեց գիլի ճրագուն: (ՀԹ,3,5),-գոյական:

Քո ժողովրդով հանդերձ կմերժեք և կվանեք չարանենգ հրամանը: (Դ.Դ.),-կապ: Ձեռք գոյականի բացառական հոլովածևից առաջացել է ձեռքից կապը: Քանի՞ ձեռքից եմ վառվել Վառվել ու հուր եմ դառել: (ՀԹ,1,206),-գոյական: Մի անգամ էլ մարդ սպանեցի և փախա արդարադատության ձեռքից: (ՆԴ,361),-կապ:

Բ. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻՑ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՇԱՂԿԱՊՆԵՐԻ

Շաղկապ խոսքի մասը կյանքի է կոչվել լեզվի զարգացման պահանջներից դրդված: Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը լեզվի նախնական զարգացման շրջանում հանդես են եկել որպես նախադասության ինքնուրույն անդամներ: Հետագայում նյութական իմաստի մթագնման և հարաբե-

ության իմաստի զարգացման հետևանքով այդ բառերը դադարել են նախադասության անդամ լինելուց և ծառայել են որպես կապակցության միջոց շաղկապ: Շաղկապները մեծ մասամբ առաջացել են դերանուններից, առանձին դեպքերում գոյականներից, բայական ձևերից, կապերից, մակբայներից և եղանակավորող բառերից: Կամ(ը) գոյականից իմաստի վերացարկումով առաջացել է կամ շաղկապը: Բախտի կռանը կամքն է թեև, բայց դիպվածն է տիրական: (ԱԻ,1,254),-գոյական:
Ինչիս են պետք ոսկին, արծաթ եվ կամ աստղը երկընքի: (ՀԹ,1,294),-շաղկապ: Իսկ գոյականից նյութական իմաստի վերացարկման հետևանքով առաջացել է իսկ շաղկապը: Իսկն ու երազը ծուլվել են իսպառ, Ոչինչ չի տենչում իմ հոգին տխուր: (ԱԻ,1,230),-գոյական:
Բաներ, որ իսկի հարկավոր չեն քեզ,
Իսկ նըրան անչափ շատ են ցանկալի: (ՀԹ,2,244),-շաղկապ:

Գ. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻՑ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ

Եղանակավորող բառերը պատմականորեն առաջացել են զանազան խոսքի մասերի պատկանող բառերից վերջիններիս մեջ նախապես առկա եղանակավորության, երանգի իմաստի զարգացման ու ծավալման հետևանքով: Նյութական իմաստ ունեցող մի շարք բառեր, անջատվելով նախադասության կառուցվածքից, որպես խոսողի վերաբերմունքի արտահայտման շարահյուսական միջոց, աստիճանաբար զրկվում են իրենց նյութական բովանդակությունից և քերականական հատկանիշներից ու վեր են ածվում եղանակավորող բառերի:
Իսկ գոյականից առաջացել է իսկ եղանակավորող բառը:
Եվ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին Պատվեր տըվինք մեր բանակին: (ՀԹ,1,332),-եղանակավորող բառ: Ափսոս գոյականի նյութական իմաստի վերացարկումով առաջացել է ափսոս եղանակավո-րող բառը: Ո՞վ է նա, որ չի վախենա մեն-մենակ գնալու հազարների դեմ, առանց ափսոսի իր կյան-քը զոհելու: (ԱԻ,1,183),-գոյական: Ա՜խ, ափսոս, իմ գարուն կյանքիս Սուր փշերը մընացին: (ԱԻ,1,55),-եղանակավորող բառ:

Դ. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻՑ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Չայնարկությունները նյութական իմաստից զուրկ խոսքի մաս են, արտահայտում են խոսողի զգացական վերաբերմունքը: Սրանք ևս առաջացել են նյութական խոսքի մասերից վերջիններիս նյութական իմաստի մթագնման և առարկայական նշանակության վերացարկման ճանապարհով:
Ահ գոյականից նյութական իմաստի վերացարկման հետևանքով առաջացել է ահ ձայնարկությունը: Մահի ահ կա իմ սրտում: (ՀԹ,1,205),-գոյական:

Ա՞հ, խեղճ կանայք, էլ ու՞ր վազեն: (ՀԹ,1,58),-ձայնարկություն:
Աման գոյականից առաջացել է աման ձայնարկությունը:
Ամանող ու՞ր է, ամանող բեր: (ՀԹ,1,329),-գոյական: Ամա՛ն, հողեմ գլուխը Շահի, Աստված Շահից հեռու պահի: (ՀԹ,1,344),-ձայնարկություն:
Պահ գոյականից առաջացել է պահ ձայնարկությունը նյութական իմաստի վերացարկման հետևանքով:
Երկու հոգի այս պահուն ծառերի տակովն անցան: (ՀԹ,3,19),-գոյական:
Պահ, քու տունը չըքանդվի...-
Ծափ տըվին ու ծիծաղեցին մի քանի գյուղացի: (ՀԹ,3,63),-ձայնարկություն:
Ջան գոյականի նյութական իմաստի վերացարկումով առաջացել է ջան ձայնարկությունը: Բեզարած ջանից դուրբան, Ճըտից թև առ, թեզ արի: (ԱԻ,1,36),-գոյական: Գառների հետ լուսաբացին Եկար սարը, ջան աղջիկ: (ԱԻ,1,12),-ձայնարկություն:
Վախ գոյականից նյութական իմաստի վերացարկումով առաջացել է վախ ձայնարկութ-յունը: Եվ բեռնավորված հույսով ու վախով Սեռավ հին տարին: (ԱԻ,1,260),-գոյական: Վա՛խ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք: (ԱԻ,1,72),-ձայնարկություն:
Վուշ գոյականի նյութական իմաստի վերացարկման հետևանքով առաջացել է վուշ ձայնարկությունը: Ինչ կըլինի գնաս վուշ առնես բերես, մանած անեմ: (ՀԹ,3,265),-գոյական: Վու՛շ-վու՛շ, Ա՛նուշ, վու՛շ-վու՛շ, քուրիկ, Վու՛շ քու սերին, քու յարին: (ՀԹ,2,71),-ձայնարկություն:

Այսպիսով, լեզվի զարգացման հետևանքով բառերի բառային իմաստները ենթարկվում են փոփոխությունների, որոնք կատարվում են բառի արմատի նյութական իմաստի վերացարկման և խոսքիմասային հարացույցի թեք ձևերում բառածևի քերականական իմաստի մթագնման հետևանքով: Շարահյուսական տարբեր կիրառություններում նյութական իմաստ ունեցող բառերը, զրկվելով նյութական իմաստից, վերածվում են սպասարկու բառերի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աբրահամյան Ս.Գ., Ձթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965
2.Աղայան Է.Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան,1984
3.Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Երևան,1984
4.Սաստրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա.Ե.,1970
5.Թումանյան Հովհ., Երկերի ժողովածու, I, II, III (1940-51), VI (1959)
6.Իսահակյան Ավ., Բանաստեղծություններ, 1, Երևան1950
7.Խաչատրյան Է.Մ., Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան,1985
8.Ջահուկյան Գ.Բ.,ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան,1974
9.Սևակ Գ.Գ., ժամանակակից հայոց լեզվի դասընթաց,Երևան,1955